



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### “ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ

“ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” Ապահովագրական ՍՊԸ-ն իր 2018 թվականի գործունեության և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերստուգման նպատակով արտաքին անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք բավարարում են ՀՀ ԿԲ “Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները” Կանոնակարգ 3/11-ով սահմանված չափանիշներին:

Աուդիտի աշխատանքները պետք է ընդգրկեն՝

- 2018թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտը և աուդիտորական եզրակացության ներկայացումը:
- 2018թ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արդյունքում կազմված “Նամակ ղեկավարության” փաստաթղթի ներկայացումը:

Աուդիտորական եզրակացությունը և “Նամակ ղեկավարությանը” փաստաթղթերը պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 2019թ. ապրիլի 15-ը:

Աուդիտը պետք է իրականացվի Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

Մրցույթն անցկացվելու է Ընկերությունում՝ ՀՀ, ք.Երևան, Հյուսիսային պողոտա 10, թիվ 1 տարածք հասցեում: Մրցույթի հայտերն ընդունվում են մինչև 2018 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ, առձեռն կամ փոստային ծառայության միջոցով: Մրցույթի հայտերով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը պետք է լինեն հայերեն լեզվով:

Մրցույթն անցկացնում է մրցութային հանձնաժողովը: Մրցույթի հայտերը բացվում են հրապարակային ծանուցման մեջ նշված առաջարկների ներկայացման օրվանից 5 օրվա ընթացքում՝ մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններն Շնկերությանն են ներկայացնում տեխնիկական և ֆինանսական հայտեր՝ մեկ ծրարով:

1. Տեխնիկական հայտը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը՝

ա) մրցույթի մասնակցի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, պետական գրանցման վկայականի, աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները,

բ) ծառայությունների մատուցման բնութագիրը,

գ) ծառայությունների մատուցման երաշխիքային ժամկետները,

դ) նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից ֆինանսական ոլորտի կազմակերպություններին նմանատիպ ծառայությունների մատուցման ցանկը,

ե) աուդիտորների անունները, ազգանունները, աշխատանքային փորձը, փոխկապակցվածության աստիճանը, աուդիտորների որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականների պատճենները,

զ) տեղեկանք լիցենզավորող լիազորված պետական կառավարման մարմնի կողմից այն մասին, որ աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան կասեցված կամ դադարեցված չէ,

է) աուդիտորական կազմակերպության և աուդիտորների անկախությունը ըստ “Աուդիտորական գործունեության մասին” ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, հաստատող փաստաթուղթ,

ը) մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատուցվելիք ծառայությունների որակը:

2. Ֆինանսական հայտը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

ա) ծառայությունների մատուցման ընդհանուր գինը, որը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և այլն.

բ) ծառայությունների մատուցման ընդհանուր գնի վճարման ձևն ու պայմանները.

զ) մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովվածությունը և ռիսկերի բավարար փոխհատուցման չափը.

դ) աուդիտի արժեքը.

ե) մրցույթի մասնակցի հայեցողությամբ ծառայությունների մատուցման ֆինանսական կողմին վերաբերող այլ անհրաժեշտ տեղեկատվություններ և հիմնավորող փաստաթղթեր:

Մրցույթի հայտերը ներկայացվում են սուսնձված, կնքված և (կամ) ստորագրված ծրարով, որտեղ պետք է ներառված լինեն Հայտարարության 1-ին և 2-րդ կետերում նշված Տեխնիկական և Ֆինանսական հայտերը: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված թվով պատճեններից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են "Բնօրինակ" և "Պատճեն" բառերը: Միաժամանակ ծրարի վրա պետք է կատարվեն՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրի (հասցեի) և "Չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը" գրառումները:

Հայտարարության պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացվելու մերժվում և վերադարձվում են ներկայացնողին:

Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը:

Մրցութային հայտեր ներկայացրած անձինք կարող են անվճար ստանալ "ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ" Ապահովագրական ՍՊԸ-ի արտաքին աուդիտն իրականացնող անձի (արտաքին աուդիտի) ընտրության կարգի պատճենը, ինչպես նաև ծանոթանալ դրան ՀՀ, ք.Երևան, Հյուսիսային պողոտա 10, թիվ 1 տարածք հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Գլխավոր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրեն՝ Տիգրան Հարությունյանին

Հեռ.՝ +374 11 56 04 04